



Մ ՈՒՐԲ Յ ԱԿՈՐ

ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ՄԱՅՐ Ե ԿԵՂԵՑԻ



ՅԻԱԱԿԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԻՐԱԿԻ

29 ՆՈՅԵՄԲԵՐ 2009

Կիրակնօրեայ ընթերցումներ	էջ 1
Հայ Մանուկին Կրօնական	
Դաստիարակութիւնը	էջ 2
Աւետիս	էջ 5
Դէպի Ադրիւրը Լոյսին	էջ 5
Ծանուցում	էջ 7

ԸՆԹԵՐՑՈՒՄ
ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ԳԻՐՔԷՆ
(36.22-37.11)

Քեղկիայի որդի Եղիակիմը, որ արքունի հազարապետն էր, հրովարտականներու քարտուղար Սոմնասը եւ Ասափի որդի Յովաքը, որ արձանագրութիւն պահող քարտուղարն էր, իրենց վերարկունները պատռած՝ եկան Եզեկիա թագաւորին մօտ, եւ Սենեքերիմի հրամանատարին խօսքերը փոխանցեցին:

Եզեկիա երբ լսեց իր հագուստները պատռեց, քուրձ հագաւ եւ ելաւ Տիրոջ տաճարը գնաց, եւ Եղիակիմ հազարապետը, քարտուղար Սոմնասն ու տաճարի քահանաներէն ծերերը, բոլորն ալ քուրձեր հագած, զրկեց Ամոսի որդի Եսայի մարգարէին քով, որպէսզի անոր ըսեն. «Եզեկիա այսպէս կ'ըսէ. - Այսօր սուգի, նախատինքի, կշտամբանքի եւ բարկութեան օր է: Ծննդական կնոջ պէս՝ երկունքը բռներ է մեզ, բայց ոյժ չունինք ծնանելու: Թող քու Տէր Աստուածդ լսէ թէ ի՛նչ կ'ըսէ Ասորեստանի թագաւորին հրամանատարը, որ իր Տիրոջ կողմէ զրկուեցաւ կենդանի Աստուածը նախատելու ա՛յն նախատական խօսքերով, որ քու Տէր Աստուածդ լսեց: Արդ, հարցուր քու Տէր Աստուծոյդ, ի՞նչ պիտի ըլլայ մնացողներուս վիճակը»:

Երբ Եզեկիա թագաւորին ծառաները Եսայիի քով եկան, Եսայի ըսաւ անոնց. «Հետեւեալը ըսէք ձեր տիրոջ. - Այսպէս կ'ըսէ

Տէրը. Մի՛ վախնար այն խօսքերէն որ լսեցիր եւ որոնցմով Ասորեստանի թագաւորին պատգամաւորները զիս նախատեցին: Ահաւասիկ ես անոր հոգին պիտի խռովեմ այնպիսի լուրով մը, որ ստանալուն պէս իր երկիրը պիտի վերադառնայ եւ հոն սուրով պիտի սպաննուի»:

Ասորեստանի թագաւորին հրամանատարը վերադարձաւ իր տիրոջ մօտ, որ Լաքիշէն ելած եւ Լիբնա քաղաքը պաշարած էր: Այնտեղ Սենեքերիմ լսելով որ Եթովպիոյ Թարակա թագաւորը իր վրայ յարձակած է, անոր դէմ դարձաւ: Նոյն ատեն պատգամաւորներ զրկեց Եզեկիային, ըսելով. «Այսպէս ըսէք Հրէաստանի թագաւոր Եզեկիային. - Այն Աստուածը որուն ապաւիններ ես՝ թող քեզ չխաբէ, ըսելով թէ Երուսաղէմը Ասորեստանի թագաւորին ձեռքը պիտի չմատնուի: Միթէ չլսեցիր՞ թէ ի՛նչպէս Ասորեստանի թագաւորները ամբողջ աշխարհը կործանեցին: Կը կարծես որ դուն պիտի ազատի՞ս»:

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ
ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ
ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԷՆ
(4.1-11)

Այսպէս, ուրեմն, եղբայրներ, մենք ձեզի Ասորվեցողցիք թէ ի՛նչպէս պէտք է ապրիլ Աստուծոյ հաճելի ըլլալու համար: Թէպէտ այդպէս կ'ապրինք արդէն, սակայն կը խնդրենք եւ Տէր Յիսուս Քրիստոսի անունով կը թելադրենք որ շարունակէք յառաջանալ ներկայ ձեր ընթացքին մէջ: Գիտէք թէ ի՛նչ պատուէրներ տուինք ձեզի Տէր Յիսուսի անունով, որովհետեւ Աստուծոյ կամքն է որ դուք սրբուիք եւ ամենեւին հեռու մնաք պոռնկութենէ: Զեզմէ իւրաքանչիւրը թող սրբութեամբ ու պատուով ամուսնանայ:

Կրքոտ ցանկութիւններու անձնատուր մի՛ ըլլաք հեթանոսներուն պէս, որոնք զԱստուած չեն ճանչնար. կամ չըլլայ որ մէկը եղբօր մը դէմ մեղանչէ անոր կիներ յափշտակելով, որովհետեւ այդ բոլորին համար Տէրը իր դատաստանին մէջ անողոք պիտի ըլլայ, ինչպէս սկիզբէն ըսինք ձեզի եւ ազդարարեցինք: Միթէ Աստուած մեր պղծալից կեանքը շարունակելո՞ւ հրաւիրեց մեզ, թէ սրբութեամբ ապրելու: Անշուշտ թէ սրբութեամբ ապրելու: Հետեւաբար ով որ սրբութեան այս պատուէրը կ'արհամարհէ՝ մարդ մը անարգած չ'ըլլար, այլ նոյնինքն զԱստուած, որ իր Սուրբ Հոգին կու տայ մեզի:

Գալով եղբայրսիրութեան, մեր գրելուն պէտք չունիք, որովհետեւ ինքնին դուք Աստուծոյ սորված էք գիրար սիրել, ինչպէս արդէն գործնապէս ցոյց կու տաք այդ սէրը ամբողջ Մակեդոնիայի բոլոր եղբայրներուն նկատմամբ: Բայց դարձեալ, եղբայրներ, կը խնդրենք որ աւելի առատանաք ձեր սիրոյն մէջ, ջանաք հանդարտ կեանք մը վարել, միայն ձեր գործին նայիլ եւ ձեր աշխատանքի վաստակով ապրիլ, ինչպէս որ պատուիրեցինք ձեզի, որպէսզի ձեր պարկեշտ ընթացքով յարգուիք չհաւատացողներէն եւ ոեւէ մէկուն կարօտ չմնաք:

**ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ
(13.1-9)**

Ո մանք եկան Յիսուսի եւ պատմեցին այն գալիլիացիներուն մասին, որոնք Պիղատոսի կողմէ սպաննուեցան, երբ Աստուծոյ զոհ կը մատուցանէին: Յիսուս անոնց ըսաւ. «Կը կարծէ՞ք թէ սպաննուող գալիլիացիները միւս բոլոր գալիլիացիներէն աւելի մեղաւոր էին, որ այդպիսի վախճան մը ունեցան: Ո՛չ: Կ'ըսեմ ձեզի, որ եթէ չապաշխարէք՝ դուք բոլորդ ալ նոյնպէս պիտի մեռնիք: Կամ ի՞նչ կը մտածէք այն տասնեակութ մարդոց մասին, որոնց վրայ ինկաւ աշտարակը Սելովամի մէջ եւ սպաննեց զանոնք: Անոնք աւելի՞ յանցաւոր էին քան Երուսաղէմի բոլոր բնակիչները: Ո՛չ: Կ'ըսեմ ձեզի, որ եթէ չապաշխարէք՝ բոլորդ ալ նոյնպէս պիտի մեռնիք»:

Անոնց հետեւեալ առակը պատմեց. «Մարդ

մը կար որ իր այգիին մէջ թզենի մը տնկած էր: Երբ ժամանակը եղաւ, թուզ քաղելու գնաց, բայց թզենիին վրայ պտուղ չգտաւ: Այգեպանին ըսաւ. «Այս երրորդ տարին է որ կու գամ թուզ քաղելու, բայց չեմ գտներ: Ուստի կտրէ՞ գայն, ինչո՞ւ անիմաստ կերպով տեղ գրաւէ»: Այգեպանը պատասխանեց. «Տէ՛ր, թող այս տարի ալ մնայ. ես իր շուրջի հողը կրկին կը փորեմ եւ պարարտացուցիչ կը դնեմ: Այս ձեւով թերեւս պտուղ տայ. ապա թէ ոչ՝ գալ տարի կտրէ գայն»»:

**ՀԱՅ ՄԱՆՈՒԿԻՆ
ԿՐՕՆԱԿԱՆ
ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ
ԳԵՂԱՐԴ ՎՐԿ. ԳԻՒՊՈՒԿԵԱՆ**

Բանախօսութիւն՝ տրուած Ս. Յակոբ եկեղեցւոյ Կիրակնօրեայ դպրոցի 30-ամեակին առիթով, 21 Նոյեմբեր 2009-ի տօնախմբութեան ձեռնարկին՝ Հայ Կեդրոնի Ա. Ահարոնեան սրահին մէջ:

«Զգեցէ՛ք որ մանուկները ինծի գան, արգելք մի՛ ըլլաք անոնց, որովհետեւ այդպիսիներուն է երկինքի արքայութիւնը» (Մտ 19.14):

Այս բառերով մեր Տէրը յանդիմանեց իր իսկ աշակերտները, որոնք կ'արգիլէին խումբ մը մայրերու իրենց երեխաները Յիսուսին մօտեցնել, օրհնութիւն ստանալու բարեպաշտ փափաքով:

Ուրիշ առիթով մը, երբ աշակերտները կը վիճէին թէ՛ իրենցմէ ով էր մեծը, Քրիստոս մանուկ մը կանգնեցնելով անոնց մէջտեղը, ըսաւ. «Վստահ գիտցէք, որ եթէ չփոխուիք եւ մանուկներու պէս չըլլաք, երկինքի արքայութիւնը պիտի չմտնէք: Արդ, ով որ իր անձը այս մանուկին պէս կը խոնարհեցնէ՝ անիկա է մեծը երկինքի արքայութեան մէջ»:

Մանուկներու հանդէպ Քրիստոսի ունեցած արտայայտութիւններուն ընդմէջէն մենք կը հասկնանք, թէ՛

ա.- Աստուծոյ սրտին մէջ մանուկները յատուկ տեղ կը գրաւեն:

բ.- Քրիստոս մանուկները իբրեւ օրինակ կը գործածէ՝ «մեծեր»ը դաստիարակելու համար:

Արդարեւ, մանուկ դաստիարակելը կ'ենթադրէ չափով մը մանկանալ, հաղորդ դառնալ մանկական հոգեկան անմեղունակ աշխարհին եւ ամենայն բծախնդրութեամբ՝ գուրգուրալ եւ խնամել զայն:

Մանուկները փոքր են տարիքով ու հասակով, սակայն մեծ պատասխանատուութիւն կ'ակնկալուի անոնց դաստիարակներէն:

Անփորձ են կեանքը ապրելու եւ հասկնալու իմաստով, սակայն մեծ փորձառութիւն կ'ակնկալուի անոնց դաստիարակներէն:

Տկար են ֆիզիքապէս, սակայն յանցանքի մէջ գտնուող ամենէն յաղթանդամ տղամարդն անգամ չի կրնար անոնց աչքերուն մէջ նայիլ:

Եթէ կ'ուզես տրամադրութիւնդ փոխել, դիտէ մանուկի մը դիմանկարը մի քանի վայրկեանի համար:

Կ'ուզե՞ս հասկնալ, թէ՛ ի՞նչ կը նշանակէ Աստուծոյ վստահիլ եւ անոր ապաւինիլ, հետեւէ զակիրդ եւ տե՛ս թէ ան ինչպէս իր ամբողջ գոյութիւնը վստահած է քեզի եւ ամբողջութեամբ քեզի կ'ապաւինի: Զաւակդ երբեք կը կասկածի՞ վրադ:

Այս քաղցր հոգիներուն դաստիարակութեան վրայ եթէ աւելցնենք կրօնական երեսը, ապա՝ մեր պատասխանատուութիւնը առաւել՛ կը ծանրանայ:

Կրօնը մարդուն ներաշխարհին ամենէն խոր ու խորհրդաւոր բաժինին կ'առնչուի: Անիկա մարդը իր արարիչին վերացնող եւ անոր հետ հաղորդակցութեան մէջ դնող հրաշքն է, որուն միջոցը հաւատքն է: Իսկ հաւատքը աւելի բարձր բանականութիւն մըն է (ըստ Օգոստինոսի), որով մարդ արարածը կրնայ ըմբռնել եւ հասկնալ անշօջափելին եւ անտեսանելին՝ անհասկնալի սովորական ու բնական բանականութեան համար:

Կրօնը մարդը վեհացնող, ազնուացնող

եւ աստուածանման դարձնող կենցաղավարութիւնն է:

Ահա թէ ինչու, մանուկներու կրօնական դաստիարակութիւնը անհրաժեշտութիւն մըն է, մարդակերտումի իմաստով:



Ե՞րբ կը սկսի մանկան մը կրօնական դաստիարակութիւնը:

Մանուկներուն կրօնական դաստիարակութիւնը կը սկսի անոնց ծնունդէն իսկ առաջ, մօր արգանդին մէջ սաղմնաւորման օրէն իսկ, որովհետեւ մանուկներու դաստիարակութիւնը պայմանաւորուած է ծնողքին այն գիտակցութենէն, թէ՛ մանուկներու կրօնական դաստիարակութիւնը ամենէն սրբազան եւ ամենալուրջ պատասխանատուութիւնն է, որ կարելի է պատկերացնել այս աշխարհի վրայ. աւելի կարեւոր քան ամբողջ ազգ մը կամ պետութիւն մը կառավարելը: Ի վերջոյ անոնք են ազգին ապագան եւ անոնցմէ պիտի ծնին պետական անձնաւորութիւններն ու ժողովուրդին ղեկավարները:

Կը հաւատամ թէ մանուկ մը իր մօր արգանդին մէջ հաղորդ կը դառնայ անոր հոգեկան աշխարհին եւ ապրումներուն, անոր հաւատքին: Անիկա ոչ միայն մարմնական սնունդ կը ստանայ մօրմէն, այլ նաեւ՝ հոգեկան սնունդ: Անոր երակներուն մէջ ոչ միայն մայրական արիւն կը ներարկուի, այլ նաեւ հաւատք կը ներարկուի անոր հոգիին մէջ:

Մկրտութեան խորհուրդի արարողութեան ընթացքին Սաղմոսէն քաղուած հետեւեալ բառերը կ'արտասանենք.- «Մօրս արգանդէն

իսկ քեզի յարեցայ, ծնելէս իսկ առաջ, դուն ես իմ Աստուածս» (Մաշտոց - Ծիսարան):

Մանուկի մը կրօնական դաստիարակութիւնը կը սկսի մօր եւ հօր հաւատքին հետ անոր ունեցած հաղորդակցութեամբ՝ սաղմնաւորման պահէն իսկ, եւ ատոր որպէս գործնական արտայայտութիւն՝ մանկան ծնունդէն ետք, ծնողքը զայն կը բերեն եկեղեցի, մկրտութեամբ վերածնունդի արժանացնելու համար զայն, որով երեխան կը դառնայ «Աստուծոյ որդեգիր, Քրիստոսի ժառանգակից եւ Ս. Հոգւոյ Տաճար» (Մաշտոց - Ծիսարան):

Դժբախտաբար, այս հոգեւաքանջ խորհուրդը, որ սկսած էր մօրը արգանդին մէջ եւ հասած սուրբ մկրտութեան յաճախ հոս կ'աւարտի: Այլ խօսքով, մկրտութիւնը Քրիստոնէական դաստիարակութիւնը գազաթնակէտն ու վախճանը կը նկատուի, մինչդեռ անիկա պարզապէս սկիզբն է:

Մանուկներու կրօնական դաստիարակութիւն եւ ազգապահպանում

Առիթով մը հոգելոյս Զարեհ եպս. Ազնաւորեանին հարցուցինք.- «Սրբազան Հայր, լաւ հայ ըլլալու համար պէտք է լաւ Քրիստոնեա՞յ ըլլալ»: Ինչպէս յաճախ, հարցումին հարցումով պատասխանելու իր ոճով ըսաւ. «Լաւ հայ ըլլալու համար անհրաժեշտ է լաւ մարդ ըլլալը»: Եւ յարեց. «Քրիստոնէական դաստիարակութիւնը մեր մէջ մա՛րդն է որ կը կերտէ: Անհատի մը ազգութիւնը կտաւին գոյնն է, իսկ մարդկութիւնը՝ կտաւին որակը»:

Այսօր, բարձրադասակ ահագանք մը կը հնչէ մեր ժողովուրդին հոգիի ականջներուն. «ականջ ունեցողը թող լսէ» պիտի ըսէր Աստուածաշունչը: Մէկ կողմէ արդարօրէն կը բողոքենք հաւատուրացութիւն եւ ազգութեան պարտադրող թուրքին հետ կնքուած համաձայնագրերու դէմ, միւս կողմէ, սակայն կ'ապրինք աշխարհիկ, անկրօն կեանք մը, հեռու հաւատքէ եւ յատկապէս՝ Քրիստոնէական մեր հաւատքէն:

Կը լսենք, թէ Գանատայի մէջ հայ երիտասարդ մը որոշած է հետեւիլ Իսլամութեան: Ազա՞տ է. անշուշտ: Բայց երանի թէ այս հայ երիտասարդը կարենար

իր ընտրած կեանքի ընկերոջ ծանօթացնել ի՛ր հաւատքը: Ընդհակառակը, ամուսնութիւնը տեղի պիտի չունենայ անգամ հայ եկեղեցւոյ մէջ, իսկ պսակադրողը... Պահայիսթ բարեկամ մըն է որ հրաւիրուած է օրհնելու իրենց ամուսնութիւնը: Իսկ երբ երիտասարդին հայրը կը պնդէ զաւակին հայ եկեղեցւոյ մէջ ամուսնանալ, «մարդիկ ի՞նչ պիտի ըսեն» ի մտավախութեամբ, տղուն պատասխանը կ'ըլլայ. «Օր մը զիս եկեղեցի չտարիր, հիմա ինչո՞ւ կը պնդես եկեղեցւոյ մէջ ամուսնանալ»:

Ո՞վ ունի պատասխանը:

Ժամանակն է դուրս գալ մեր հանգստեան գօտիէն (comfort zone) եւ փնտռել կորսուած ոչխարները, որոնք այնքա՞ն շատ են:

Եթէ մեր թշնամիները կ'ուզէին տեսնել Հայաստան մը առանց հայութեան, ապա առանց կրօնական լուրջ դաստիարակութեան, ոչ շատ հեռու ապագային՝ կ'ունենանք հայութիւն մը առանց քրիստոնէութեան:

+++

Ս. Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Վարժարանի 30-ամեակին առիթով, կը շնորհաւորեմ եկեղեցւոյ հոգեւոր հովուութիւնն ու հոգաբարձութիւնը, Կիրակնօրեայ Վարժարանի տեսչութիւնն ու ուսուցչական կազմը, որոնք ամէն գնով Քրիստոսասէտ հաւատքն է որ կը ջամբեն մեր զաւակներուն: Ըսուած է. «Մանուկ դաստիարակելը ամբողջ գիւղ մը կ'ենթադրէ», մեր պարագային՝ «ամբողջ գաղութ մը», պիտի ըսէինք: Ուստի իւրաքանչիւրս պատասխանատուութեան իր բաժինը ունի վերցնելիք եւ կամ՝ մասնակցութեան բաժին ունի բերելիք, ամէն ձեւով քաջալերելու եւ նեցուկ կանգնելու կիրակնօրեայ մեր վարժարաններուն:

Մի քանի գործնական առաջարկներ ունիմ ծնողներուն, իրենց զաւակներուն կրօնական դաստիարակութիւնը առաւել իմաստաւորելու եւ գործնականացնելու առնչութեամբ:

1.- Աղօթել միասին.- ճաշէն առաջ, դասէն առաջ, քնանալէ առաջ աղօթել մեր զաւակներուն հետ: Աղօթքը կրօնական

դաստիարակութեան մեծագոյն ուսուցիչն է. որովհետեւ աղօթելով աղօթել կը սորվինք եւ աղօթքով զԱստուած եւ զմեզ կը ճանչնանք:

2.- Կիրակնօրեայ դպրոցի դասերուն լրջօրէն հետեւիլ.- երբ մեր զաւակը տուն կը վերադառնայ Կիրակնօրեայէն, հարցնել թէ ինչ նոր բան սորվեցաւ այդ օր:

3.- Շաբթուան մէջ իրենց սորվածը յիշեցնել գործնական կեանքի մէջ.- օրինակ, եթէ նախորդ կիրակի օրուան դասը ներողամտութեան մասին էր, եւ եթէ մեր զաւակը նեղացած է իր ընկերոջմէ, յիշեցնել անոր կիրակնօրեայի մէջ իր առած դասը եւ առաջնորդել ներողամտութեան ու հաշտութեան:

4.- Օրինակ ըլլալ.- մեծագոյն եւ կարեւորագոյն դասը, գորկարելի է փոխանցել մեր զաւակներուն: Այսօրուան մանուկներն ու երիտասարդները խօսք ու խրատէն առաջ՝ օրինակ կը փնտռեն հետեւելու:

Աստուծոյ օրհնութիւնը ըլլայ մեր բոլոր մանուկներուն վրայ: Ամէն:

ՄԵՏԻՍ

ԿԱՐՈ ՆՈՒՍՈՒՏԵԱՆ

Մարգարիկ

Միայն աւետիս ունիմ քեզի...
երբ Սիրոյ ծածկոցին տակ
ծննդոց երգեցին,
մայրդ երկնեց քեզ
եւ ծուարած
սպասեցիր Լոյսի ծագումին:

Միայն աւետիս ունիմ քեզի...
երբ ծնար, յիշէ,
երկիրը քեզ փայփայեց
ու երկնային ցօղով օրհնեց թերթերդ,
նորափթիթ վարդի պէս:

Միայն աւետիս ունիմ քեզի...
երբ թաղուեցար սուրբ աւագանին ջուրով
եւ ճգտելով վճիտ ակունքին,
անխարդախ Կեանքի դրոշմը բերիր հետդ:

Միայն աւետիս ունիմ քեզի...
երբ քալեցիր աշխարհի թոհուբոհով մէկ,
ու աղօթքդ կնքած աշխատանքով,
երբեմնի կորսնցուցած դրախտիդ
վերստին տէր եղար:

Միայն աւետիս ունիմ քեզի...
երբ խաչդ կրեցիր մինչեւ գողգոթադ
ու դառնալով
Մարդու որդւոյն չարչարանակից՝
չնորհքներուդ
պայթուցիկ սաղմը բեղմնաւորեցիր:

Միայն աւետիս ունիմ քեզի...
երբ մահուան թոյնը
իր լկտի հոտը տարածած՝
թափանցած է քայքայուած ոսկորներդ
բայց յոյս մը տակաւին
կը յանդգնի յամենալ կուրծքիդ:

Միայն աւետիս ունիմ քեզի...
երբ կը գրկես մահը
հին ծանօթի մը կարօտով,
հիմնահաստատ հաւատքով թէ՛
ամէն վերջ
ու նի վերանորոգ սկիզբ՝ յարութիւն:

Միայն աւետիս ունիմ...:

ԴԷՊՐ ԱՊԵՐԻՐԸ ԼՈՅԱՆ

(ԱՌԱՅԻՆ ԼՈՒՍԱԼՈՐԻՉՆԵՐՈՒ
ՏՕՒՆ ԱՌԻԹՈՎ)

ԳԱՌԱԿ Գ. Ք.

«Նորոգեալք ի հնութենէ
ի ձեռն սուրբ առաքելոցն»,
Շարական:

Հայ եկեղեցին Ս. Թադէոսն ու Ս. Բարթողիմէոսը
կոչած է իր «առաջին լուսաւորիչներ»ը:
Հետեւաբար, Գրիգոր Պարթեւը տեսած իբր իր
երկրորդ լուսաւորիչը:

Ի՞նչ ըսել է Ս. Թադէոսի եւ Ս. Բարթողիմէոսի
համար գործածուած «լուսաւորիչ» մակդիրը:

Թէ անոնք լոյս ունէին, թէ իրենց ստացած
լոյսը տարածեցին՝ լուսաւոր դարձնելով կամ
նորոգելով շատերու կեանքը, եւ լոյսի ժողովումը՝

եկեղեցին հիմնեցին Հայաստան աշխարհի մէջ:
Ի՞նչ լոյսի մասին է նիւթը:
Շարականին մէջ կայ կանոն մը, որ նուիրուած է մեր առաջին լուսաւորիչներուն: Յայտնի չէ հեղինակը, նոյնպէս՝ գրութեան թուականը:
Ըստ կանոնին, այդ լոյսը՝ Ս. Երրորդութեան լոյսն է:
Թարգմանաբար կը մատուցեմ Օրհնութեան առաջին պատկերը.-
Անսկիզբ, աննաեղի Աստուած եւ Լոյս համասփիճն.
Դուն ողորմութեամբդ աստուածգիտութեան լոյսը ծագեցիր
Հայաստան աշխարհին վրայ:
Միածին Որդի,
Աշխարհի վրայ Լոյսէն ծագած Լոյսն ես դուն,
որ շնորհիւ առաքեալներուն
այս աշխարհը հայոց՝ անբիծ հաւատքին հրաւիրեցիր:
Անսպառ աղբիւր,
Դուն կենդանարար անբացատրելի բխում:
Բարերար փրկիչ,
կենսատու գիտութեամբդ լեցուցիր Հայաստան այս աշխարհը:
Ինչպէս յստակօրէն կ'երեւայ, լոյսը Ս. Երրորդութեան Լոյսն է: Անիկա եռեակ ներգործութիւն ունի.
ա.- Աստուածգիտութեան լոյս է.
բ.- Անբիծ հաւատքի լոյս է. եւ
գ.- Կենսատու գիտութեան լոյս է:
Ասոնք իրարմէ անջատ լոյսեր չեն, այլ կան միասնաբար. համագոյ են՝ ինչպէս Ս. Երրորդութեան դէմքերը:
ա.- Աստուածգիտութեան լոյսը:
Շարականին խօսքը՝ «աստուածային գիտութիւն» կ'ըսէ: Անիկա չի վերաբերիր Աստուծոյ գիտութեան, այլ այն ճանաչողութեան՝ որով մեզի Աստուած կը յայտնուի: Աստուծոյ ճանաչումը մարդկային մտքի եզրակացութիւն մը չէ: Անիկա հանդիպումն է այն սրտին՝ որ ինքզինք բացած է առ Աստուած, որուն ականջները Աստուծոյ խօսքերուն ունկնդիր են, եւ որուն շրթները զԱստուած կ'օրհնեցեն:
Այդ ճանաչողութիւնը աստուածային է, քանի Աստուած է, որ կը պարզեւէ զինք ճանչնալու շնորհը:
Եւ Աստուած Քրիստոսի հետեւորդներուն ինքզինք կը յայտնէ իբր «Աբբա», այսինքն՝ «Հայրիկ» (թէեւ «Հայր մեր»ը մեզ վարժեցուցած


է Աստուծոյ մասին խօսիլ իբր Հայր, բայց Յիսուս զԱյն «Աբբա» կոչեց, որուն հարազատ թարգմանութիւնն է «Հայրիկ»: «Աբբա»ն փոքրիկներուն իրենց հօր համար գործածած անունն է. այսօր «պապա» կ'ըսեն ոմանք. «աբբա»ն ճիշդ այդ «պապա»ն է): Ուրեմն, աստուածգիտութեան լոյսը որ Հայաստանի մէջ ծագեցաւ, Աստուծոյ Հայրիկութեան լոյսն է:
բ.- Անբիծ հաւատքի լոյսը:
Ո՞ր հաւատքը անբիծ է:
Հաւատքը առ Աստուած արմատական վստահութիւնն է: Իսկ «անբիծ» որակականը ցոյց կու տայ այդ վստահութեան բարոյական ընթացքը: Իրականութեան մէջ, այն հոգին որ հաւատքը ունի՝ պատուիրաններուն համաձայն մաքուր կեանք մը կ'ապրի: Մաքուր կեանքը թարգմանութիւնն է ներքին այդ արմատական վստահութեան: Առանց մաքուր կեանքին՝ կեղծիք է կամ ինքնախաբէութիւն է հաւատքը: Հաւատքը կա՛մ անբիծ է, այսինքն՝ բարոյական ուղիղ վարքով մը կ'արտայայտուի, կամ՝ հաւատք չէ:
Ան որ Աստուծոյ Հայրիկութեան լոյսը կ'ընդունի, գիտէ թէ Քրիստոսի միջոցով այդ յայտնութեան հասաւ, ուստի կը քալէ Քրիստոսի ճամբուն մէջ, որ նորոգութեան, վերանորոգութեան եւ ճշմարիտ կեանքի ճամբան է. այնտեղ կը տիրէ արգարութիւնը եւ սրբութիւնը (հմմտ Եփ 4:20-24):
գ.- Կենսատու գիտութեան լոյսը:
Շարականին խօսքը՝ «կեցուցիչ գիտութիւն» կ'ըսէ: «Կեցուցիչ» բառը քանի մը իմաստներ ունի. կը նշանակէ՝ ոտքի կեցնող կամ կանգնեցնող, նաեւ՝ ապրեցնող կամ փրկող կամ կենսատու: Այս հոմանիշներէն «կենսատու»ն նախընտրեցի, որովհետեւ Ս. Հոգին շնորհիւ վերականգնումը կամ փրկութիւնը՝ նոր կեանք են:
Արդ, կենսատու գիտութիւնը Ս. Հոգին կու տայ: Ս. Հոգին է, որ եկեղեցւոյ կեանքին մէջ Քրիստոսի միջոցով յայտնուած Աստուծոյ Հայրիկութեան ճանաչումը կը մատակարարէ: Նաեւ հաւատացեալները կ'աճեցնէ Աստուծոյ որդի ըլլալու իրենց փորձառութեան մէջ:
Ս. Թադէոսի եւ Ս. Բարթողիմէոսի տօնը՝ Հայոց աշխարհին այս եռեակ եւ մի Լոյսով նորոգութիւնը կը վերապատմէ: Նորոգութիւն՝ որ հայ ժողովուրդը պիտի պատրաստէր 301 թուի Մեծ Ուխտին:

Լոյս տալ

«ԲԱՆ ԵՒ ԳԻՐ» ՄԱՏԵՆԱՀԱՐ ԹԻՒ 6

ARAM I

DIALOGUE WITH THE YOUTH



DIALOGUE AVEC LES JEUNES

Traduction française par
Daniel Racine

MONTREAL 2009

Ս. ՅԱԿՈՒ ԱՌԱՋԱՆՈՐԴԱՆԻՍ
ՄԱՅՐ ԵԿԵՂԵՅԻ

«ՆՈՐ ԾԱՊԻԿ»

ՓՈՔՐԻԿԱԵՐՈՒ ԵՐԳՉԱԽՈՒՄԲԸ

Ս. ՊԱՏԱՐԱԳԸ

Կ'ԵՐԳԷ

ԿԻՐԱԿԻ, 6 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2009-ԻՆ

ՄԱՆՈՒԿԱԵՐ ՈՒ ՊԱՏԱԽԱԵՐ,

ԵԿԵՂԵՅԻ ԵԿԷԸ,

ԵՒ

«ՆՈՐ ԾԱՊԻԿ»ԻՆ ՀԵՏ

ԱՌՈԹԵՅԷԸ:

ՀԱՄԱՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐՈՒՄ ՀԱՄԱՐ՝
ՁՐԻ ԱՏԱՆԱՅԻՆ ՀԱՄԱՐ
ԿՐ ԽՆԴՐՈՒԻ ԱՆՁԱՄԲ ԱԵՐԿԱՅԱՆԱԼ
ԵԿԵՂԵՅՈՅԱ ԳՐԱՍԵՆԵԱԿ

ՀԻՖԱՆԴԱԵՐՈՒ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՄ
Բարեհաճեցէք հեռաձայնել Արժ. Ս.
Գառնիկ Քինյ. Գոյունեանի.
514 331 5445 x203 կամ 514 909 5203 թիփն:

Հոգեւանգստեան Ձեր
արձանագրողութիւնները աւիտօրօք
ԿԱՏԱՐԵՅԷԸ ԿՐՊՈՒԵԼՈՎ
ԵԿԵՂԵՅՈՅ ԴԻՖԱՆԱՏՈՒՄ



ՀՈՎԻԻԸ
ԸՆՏԱՆՆԻՔՆԵՐՈՒՄ ՄԷՁ

Անոնք որ կը փափաքին
հովիւին այցելութիւնը ունենալ
իրենց տունէն ներս,
թող բարեհաճին դիմել
Ս. Գառնիկ Քինյ. Գոյունեանի,
հեռաձայնելով 514 331 5445 x203
կամ՝ 514 909 5203 թիւերէն մէկուն:

ԲԱՍՏՐԱՃԵԱՆ ՖՈՆՏԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՄ
ԵՒ
ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ՍԱՆՃԻՆ ՄԱՍՆԱՃԻՐԻ
ԳՈՐԾԱԿՅՈՒԹԵԱՄ

ՆԵՐԿԱՅՅՈՒՄ
ՆՈՐ ԼՈՅՍ ՏԵԱԾ

«ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
Ս. ՅԱԿՈԲԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ»
ՈՒՍՈՒՄԱՐՐՈՒԹԵԱՆ
(ՀԵՂԻՆԱԿ՝ ԳԱՌԱԿ Բ. Գ.)

ԳԻՐԸ ԿՐ ՆԵՐԿԱՅՅՈՒՄ
ԴՈԿՏ. ԱՅՏԱ ՊՈՒՃԻՔԱՆԵԱՆ

ԽՍՈՒՔ ԿՂՈՒՆԵԱ
ԱՐԺ. Տ. ԱՐԱԷԱ Ա. ԲՀԱ. ԻՇԽԱՆԵԱՆ
ԵՒ ՊԱՐՈՒԱՅԸ
ՊԵՏՐՈՍ ԳԱՐՐԻԷԼԵԱՆ
ԵՒ ՎՐԵԺ-ԱՐԱԷԱ ԱՐԹԻՆԵԱՆ

ՀԻՆԳՇԱՔԹԻ, 10 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ
ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄ 8.00-ԻՆ,
Ս. ՅԱԿՈՒՔ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԲԱՍՏՐԱՃԵԱՆ ԱՐԱՀ:

ՊԱՏԱԳԻՐՔԻՆ ՀԱՍՈՅԹ
ՊԻՏԻ ԱՈՒԻՐՈՒԻ Ս. ՅԱԿՈՒՔ
ԿՐԹԱԿԱՆ ՖՈՆՏԻՆ